ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

2021

Գնահատումն անցկացվել է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից՝ «Ընտրական գործընթացների և քաղաքական հաշվետվողականության ամրապնդում Հայաստանում» ծրագրի դրամաշնորհով, որն իրականացվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսական աջակցությամբ Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) կողմից:

Զեկույցը պատրաստվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ N. 72011118LA00002 դրամաշնորհով: Այստեղ արտահայտված տեսակետները միմիայն հեղինակ(ներ)ինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Զեկույցը հեղինակեցին.
Սոցիոլոգներ՝ Զառա Աղանյան, Լաուրա Բաբայան
«Ագաթ» ՀԿ նախագահ, ծրագրի փորձագետ՝ Կարինե Գրիգորյան
«Ագաթ» ՀԿ ծրագրերի բաժնի ղեկավար՝ Գայանե Գրիգորյան

Հետազոտական աշխատանքին աջակցեցին.
ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի (Ընտրական համակարգերի միջազգային հաստատություն) հայաստանյան մասնաճյուղի (IFES Armenia) «Մատչելիություն և քաղաքական ներառում» ծրագրի պատասխանատու՝ Արուսյակ Տերչանյան
Ծրագրի վարչական օգնականներ՝ Ռոզա Ավագյան, Մարինե Ավետիսյան
Մշտադիտարկման համակարգողներ՝ Անահիտ Արշալույսյան, Շուշան Երանոսյան
Ծրագրի հանրային կապերի պատասխանատու՝ Անուշ Հարությունյան
Շապիկի նկարը՝ «Զարտպրինտ» ՍՊԸ
Շարվածքի ձևավորումը՝ «Զարտպրինտ» ՍՊԸ
Խմբագրումը և սրբագրումը՝ Ռոզա Հովհաննիսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ 5
Երախտագիտության խոսք 7
Մատչելիության գնահատման համատեքստը 9
Նախաբան 9
Տեղական և միջազգային իրավական կարգավորումներ 10
Համառոտագիր 11
Մեթոդաբանություն 13
Կառուցվածք 16
Սահմանափակող գործոնները և դրանց ազդեցությունը 16
Ամփոփ արդյունքներ 17
Տեղամասային կենտրոններին հարող տարածքների մատչելիության գնահատում 18
Կայանատեղի և կանգառ 18
Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության միջազգային խորհրդանիշի առկայություն 20
Ճանապարհ դեպի տեղամասային կենտրոն 20
Մայթեզր և թեքահարթակ 21
Առաջարկություններ 23
Տեղամասային կենտրոններ ծառայող ճարտարապետական կառույցների (շենք/շինությունների) մատչելիության գնահատում 25
Տեղամասային կենտրոն ծառայող շենք/շինություններ 25
Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության միջազգային խորհրդանիշի և ուղղորդող նշանների առկայություն 25
Տեղամասային կենտրոնի մուտքի աստիճաններ 26
Տեղամասային կենտրոնի մուտքի թեքահարթակ 27
Այլընտրանքային ճանապարհ դեպի քվեարկության սենյակ 29
Տեղամասային կենտրոնի մուտքի դուռ 29
Քվեարկության սենյակ տանող ճանապարհ 30
Առաջարկություններ 31
Տեղամասային կենտրոնների քվեարկության սենյակի մատչելիության գնահատման արդյունքները 33
Մուտք դեպի քվեարկության սենյակ 33
Քվեարկության սենյակի դուռը 34
Տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար քվեարկության սենյակի մատչելիությունը 34
Հարկից հարկ տեղափոխվելու հարմարանքներ 35
Այլընտրանքային սենյակի առկայությունը 35
Առաջարկություններ 36

Տեղամասային կենտրոնների սանհանգույցների մատչելիությունը 37
Գործող սանհանգույցի առկայությունը 37
Սանհանգույցի դուռ 38
Սանհանգույցի հատակը 39
Զուգարանակոնքը 39
Սանհանգույցի հատակագծային չափսերը 40
Բացահայտումներ 40
Հետազոտության առարկա հանդիսացող գործառական գոտիներից
ամենամատչելին քվեարկության սենյակի հատվածն է, ոչ մատչելին՝ սանհանգույցը 41
Առաջարկություններ 46
Ամփոփում 47

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
ԱՅ ԷՖ Ի ԷՍ	Ընտրական համակարգերի միջազգային հաստատություն (IFES)
բուհ	բարձրագույն ուսումնական հաստատություն
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԻՄ	տեղական ինքնակառավարման մարմին
ՏԸԿ	տարածքային ընտրական հանձնաժողով
ՏԿ	տեղամասային կենտրոն
ՄԿՈՒ	միջին մասնագիտական կրթություն

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Ընտրական գործընթացների և քաղաքական հաշվետվողականության ամրապնդում Հայաստանում» ծրագրի «Մատչելիություն և քաղաքական ներառում» բաղադրիչի շրջանակներում «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ն ԱՅ ԷՖ Ի ԷՍ հայաստանյան մասնաճյուղի հետ համագործակցությամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում իրականացրեց տեղամասային կենտրոնների մատչելիության համապարփակ հետազոտություն, որի արդյունքները լուրջ ներդրում կլինեն Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական և քաղաքացիական մասնակցության, դրա խթանմանն ուղղված առաջարկությունների մշակման համար:

«Ագաթ» ՀԿ-ի թիմը շնորհակալություն է հայտնում բոլոր անհատներին ու կազմակերպություններին, որոնք իրենց ներդրումն են ունեցել և աջակցել են մեզ այս ծավալուն հետազոտության իրականացման ընթացքում:
Հետազոտական ծրագիրը հնարավոր դարձավ «Ագաթ» ՀԿ-ի, մեծ թվով մասնակիցների, հետազոտական խմբի, համագործակից տարբեր կառույցների (այդ թվում՝ պետական), հասարակական կազմակերպությունների, անհատների ու կամավորների շնորհիվ:

Հատուկ երախտագիտությամբ պետք է նշել Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի գործընկերների ներդրումը ծրագրում. նրանք ոչ միայն ակտիվ մասնակցություն ունեցան մատչելիության գնահատման գործընթացում, այլև որպես փորձագետներ՝ կիսեցին իրենց փորձն ու գիտելիքները և՛ ստուգաթերթի ստեղծման շուրջ, և՛ ԿԸՀ-ի հետ համագործակցության գործընթացի վերաբերյալ:

«Ագաթ» ՀԿ-ի կողմից ծրագրային գործողությունների իրականացման, այդ թվում՝ գնահատման հարցաթերթի մշակմանն առնչվող առաջարկությունների ամփոփման ընթացքում սերտ համագործակցություն ստեղծվեց ԿԸՀ-ի հետ: Ընդգծենք, որ համագործակցությունն ու աջակցությունը եղել են ծրագրի ողջ ընթացքում և կշարունակվեն հետագայում ևս՝ հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի համար ընտրական գործընթացը մատչելի դարձնելու նպատակով:

Ծրագրին իրենց մեծ ներդրումն ու աջակցությունն ունեցան պետական կառույցները, այդ թվում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը, որոնց անմիջական աջակցության շնորհիվ հնարավորություն ընձեռվեց մշտադիտարկումն իրականացնելու ինչպես կրթական, մշակութային, սպորտային հաստատություններում, այնպես էլ փակ քրեակատարողական հիմնարկներում:

Անչափ գնահատելի են նաև ՏԻՄ-երի հետ համագործակցությունն ու աջակցությունը: Նշված կառույցների օժանդակության շնորհիվ հնարավոր դարձավ իրականացնել մատչելիության հետազոտություն Հայաստանի տարբեր մարզերում, համայնքներում, տեղամասային կենտրոններումնույնիսկ COVID-19 համավարակի բարդ իրավիճակում:
Շատ կարևոր և գնահատելի էին նաև ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի դերն ու աջակցությունը՝ ի դեմս ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Ժերոմ Լեյրոյի, ծրագրի մատչելիության և քաղաքական ներառման պատասխանատու Արուսյակ Տերչանյանի, հաշմանդամային հարցերով փորձագետ, «Ագաթ» ՀԿ-ի նախագահ Կարինե Գրիգորյանի, «Ագաթ» ՀԿ-ի ողջ ծրագրային թիմի, ծրագրի սոցիոլոգներ Զառա Աղանյանի և Լաուրա Բաբայանի, որոնց մասնագիտական, փորձագիտական և տեխնիկական մեծ աջակցությունը բացառիկ էր ծրագրի և մատչելիության հետազոտության գործընթացի բոլոր փուլերին:

Եվ վերջապես, հետազոտական թիմը հատուկ շնորհակալություն է հայտնում բոլոր դպրոցների և նախակրթարանների տնօրեններին, համայնքապետերին, մասնավոր կառույցների սեփականատերերին ու անհատներին, ինչպես նաև բոլոր մշտադիտարկող-ներին, Հայաստանի քաղաքաբնակ ու գյուղաբնակ տարբեր վայրերից հաշմանդամություն ունեցող և չունեցող կանանց ու տղամարդկանց, որոնք մեծ սիրով ու նվիրումով մասնակցեցին հետազոտությանը և տրամադրեցին անչափ կարևոր ու անհրաժեշտ տեղեկատվություն:

ՆԱԽԱԲԱՆ

Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ 2019թ. տարեվերջի դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության էլեկտրոնային տեղեկատվական բազայում (հաշմանդամության վարչական ռեգիստրում) ընդգրկված է եղել հաշմանդամություն ունեցող 192013 անձ, որը կազմում է Հայաստանի Հանրապետության բնակչության 6%-ը[1]: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը գնահատում է, որ աշխարհում բնակչության մոտավորապես 15%-ը՝ ավելի քան մեկ միլիարդ մարդ, ունի հաշմանդամություն[2]:

Ցավոք, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում սանձազերծված պատերազմի հետևանքով, ըստ ոչ պաշտոնական և վերջնական տվյալների, հաշմանդամություն ձեռք բերած զինվորականների թիվն ավելացել է մի քանի հազարով:

Հաշմանդամություն ունեցող անձինք Հայաստանում բախվում են բազում խոչընդոտների ու մարտահրավերների իրենց կրթական, հասարակական և քաղաքական մասնակցությունն ու իրավունքներն իրացնելիս: Հայաստանի Հանրապետության օրենքներն ու քաղաքականությունը դեռևս հիմնված են և համապատասխանում են հաշմանդամության բարեգործական ու բժշկական մոդելներին՝ չնայած այդ մոդելների անհամատեղելիությանը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային, որը վավերացվել է Հայաստանի կառավարության կողմից 2010 թ.-ին:

Հաշմանդամության հիմքով բացառումն ընտրական գործընթացներից ու քաղաքական կյանքին մասնակցությունից զրկումը խտրականության օրինակներ են: Բարեփոխված օրենքները, քաղաքականությունները և կանոնակարգերը հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես ֆիզիկական ու մտավոր հաշմանդամություն ունեցողներին, լիովին չեն ներառում: Վերջիններս չեն կարող անարգել իրացնել իրենց քվեարկության իրավունքը, չեն կարող ընտրություններում հավասար սկզբունքներով ու հավասար պայմաններում հանդես գալ որպես թեկնածու, հանձնաժողովի անդամ, դիտորդ, լիազորված անձ կամ ընտրող: Ընդհանուր առմամբ, ընտրությունների բոլոր փուլերում ընտրական գործընթացը մատչելի չէ հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի համար:

Հաշմանդամություն ունեցող անձինք իրենց ընտրական իրավունքն իրացնելիս բախվում են տեղամասային կենտրոնների ֆիզիկական անմատչելիության, մատչելի տեղեկատվության բացակայության և այլ խնդիրների:

[1] https://www.armstat.am/file/article/soc_vich_2019_11.pdf
[2] https://www.who.int/teams/noncommunicable-diseases/disability-and-rehabilitation/world-report-on-disability

ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, որի 29-րդ հոդվածն անդրադառնում է քաղաքական կյանքին մասնակցությանը:

Կոնվենցիան վավերացրած պետությունները երաշխավորում են հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքները և պարտավորվում են՝

- ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք արդյունավետ ու լիակատար մասնակցություն ունենան քաղաքական ու հասարակական կյանքին, այդ թվում՝ այլոց հետ հավասարազոր հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով՝ներառյալ ընտրելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը:

- ապահովել, որ ընտրությունների ընթացակարգերը, շենքերը և նյութերը համապատասխան, մատչելի, հասկանալի ու օգտագործելի լինեն նրանց համար:

- պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը՝ ընտրություն կատարելու գաղտնի քվեարկությամբ ընտրությունների և հանրաքվեների ժամանակ՝ առանց սպառնալիքների, ինչպես նաև ապահովել կառավարության բոլոր մակարդակներում ընտրվելու, պաշտոն զբաղեցնելու և հանրային գործառույթներ իրականացնելու նրանց իրավունքի իրացումը՝ դյուրացնելով օժանդակող և նոր տեխնոլոգիաների օգտագործումը, երբ անհրաժեշտ է:

<u>Ներպետական օրենսդրությունն արտացոլում է միջազգային փաստաթղթերով Հայաստանի ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածն ամրագրում է ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքը՝ գաղտնի քվեարկությամբ:</u>

ՀՀ Ընտրական օրենսգիրքը (այսուհետ՝ ԸՕ) ևս ամրագրում է հավասար ընտրական իրավունքը և հակախտրականության կանոնը, մասնավորապես՝ ԸՕ-ի 3-րդ հոդվածով սահմանված են՝

1. Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:
2. Պետությունը հավասար պայմաններ է ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:
3. Ընտրողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն:

Թեև ՀՀ Սահմանադրությամբ և ընտրական օրենսդրությամբ ամրագրված են հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքներն ու դրանց իրացման հնարավորությունները, այդուհանդերձ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն 2017թ. Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում հայտնել է մի շարք մտահոգություններ, մասնավորապես՝

«Կոմիտեն մտահոգված է, որ հաշմանդամություն ունեցող անձինք չեն մասնակցում ընտրական գործընթացներին մյուսների հետ հավասար հիմունքներով, ինչը տեղամասային կենտրոնների անմատչելիության, աջակցության ծառայությունների բացակայության և ընտրություններին առնչվող տեղեկատվության մատչելի ձևաչափերի բացակայության արդյունքն է: Մտահոգիչ է նաև հաշմանդամություն ունեցող անձանց (հատկապես հաշմանդամություն ունեցող կանանց) ցածր մասնակցությունը հանրային և քաղաքական կյանքում որոշումների կայացմանը: Կոմիտեն առաջարկում է անդամ պետությանը ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցառումներ՝ հնարավորություն ընձեռելու համար հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մասնակցել հանրային և քաղաքական կյանքին (ներառյալ ընտրելու և ընտրվելու իրավունքը), ապահովել, որ ընտրական գործընթացները, վայրերը և միջոցները մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար, խթանել հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես կանանց, մասնակցությունը հանրային որոշումների կայացմանը»[3]:

Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքին է անդրադառնում նաև ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 22-ի «Քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով լրացուցիչ հնարավորություններ սահմանելու մասին» N 136-Ն որոշումը: Ընդգծենք, որ «Ագաթ» ՀԿ-ի կողմից առաջարկություններ են ներկայացվել ԿԸՀ-ին այդ որոշման առնչությամբ:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ն ԱՅ ԷՖ Ի ԷՍ հայաստանյան մասնաճյուղի և ԿԸՀ-ի հետ համագործակցությամբ «Մատչելիություն և քաղաքական ներառում» ծրագրի շրջանակներում Հայաստանի ամբողջ տարածքում իրականացրեց տեղամասային կենտրոնների մատչելիության համապարփակ հետազոտություն:

Ծրագրի նպատակն էր՝ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հիմունքներով, արդյունավետ ու լիարժեք մասնակցությունը քաղաքական ու

[3] http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2fPPRiCAqhKb7yhspZQ2sppBOANJSxHHwrsEJbjcpUWkg%2bMkKIITZvw7JK%2buYWfpBtdMlEVnF0fSZiwodb8OBMgU4q3E3dlH%2fYkMw%2fe0juigiYWKOfVF6vzhs77

հասարակական կյանքին՝ այդ թվում նաև կարևորելով քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքն իրացնելու հնարավորությունը:
Հավատացած ենք, որ այս զեկույցում արտացոլված արդյունքները կծառայեն որպես օգտակար ռեսուրս ոչ միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար՝ նպաստելու հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացմանը, այլ նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների և տարածքային մարմինների քաղաքաշինության պատասխանատու կառույցների համար՝ նպաստելու կրթության համընդհանուր ներառականությանը, առհասարակ, Հայաստանում մարդու իրավունքների և ներառականության սկզբունքների կայացմանը:
Ծրագրի շրջանակներում «Ագաթ» ՀԿ-ի և ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի կողմից մշակվել է տեղամասային կենտրոնների մատչելիության ստուգաթերթ: Հավաքագրվել և ձևավորվել են մշտադիտարկման ներառական խմբեր: Երևանում, Գյումրիում ու Վանաձորում տեղի են ունեցել և՛ առկա, և՛ հեռավար կողմնորոշիչ դասընթացներ, որոնց արդյունքում մատչելիության գնահատում իրականացնող մշտադիտարկման խմբերը ձեռք են բերել գիտելիքներ ու հմտություններ տեղամասային կենտրոնների մատչելիության գնահատման չափանիշների, մշտադիտարկման գործիքակազմի և մեթոդաբանության վերաբերյալ:

2020 թվականի ապրիլի 5-ին նշանակված հանրաքվեից առաջ կազմավորված տեղամասային կենտրոնների գրեթե 99%-ում (2008 ընդհանուր թվով տեղամասային կենտրոններից 1987-ում) մշտադիտարկման խմբերի միջոցով իրականացվեց մատչելիության գնահատում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տեղամասային կենտրոնների մատչելիության գնահատման մեթոդաբանությունը մշակվել է միջազգային ու տեղական նորմատիվ-իրավական, կազմակերպչական և մեթոդական փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ձևավորման և այլընտրանքային լուծումների առկա փորձի հիման վրա: Կիրառվող մեթոդաբանությունը հետագայում աջակցելու է հաշմանդամություն ունեցող անձանց համար առաջնահերթություն ներկայացնող կենսագործունեության ոլորտներում կազմակերպչական և ենթակառուցվածքային բարելավման ռազմավարություն մշակելու և այն կյանքի կոչելու հարցում:



Նշված խնդիրների իրագործման համար ծրագրի կողմից հավաքագրվել և ձևավորվել են ներառական մշտադիտարկման խմբեր: ՀՀ բոլոր մարզերից, ինչպես նաև Երևանից, ընտրվել են թվով 92 մասնակից, որոնց մեծամասնությունը՝ թվով 59 (60.9%-ը), հաշմանդամություն ունեցող անձ է *(Գծապատկեր 1)*: Հատուկ ուշադրություն է դարձվել նաև մասնակիցների գենդերային կազմին, որի 69.6%-ը՝ գերակշռող մեծամասնությունը, կազմում են կանայք *(Գծապատկեր 2)*:



Մշտադիտարկման խմբերի մասնակիցներն անցել են կարողությունների զարգացման դասընթաց մշտադիտարկում իրականացնելու և մատչելիության պահանջների իրազեկման վերաբերյալ: Մշտադիտարկման խմբերի կողմից իրականացվել են այցելություններ տեղամասային կենտրոններ, տեղեկատվության հավաքագրման համար կիրառվել են տարածքի ուսումնասիրություն, չափումներ ու հարցում: Որպես գնահատման հիմնական գործիք կիրառվել է մշտադիտարկման ստուգաթերթը, որում առաջարկվում է պատասխանել հետևյալ հարցերին.

ՀՀ տեղամասային կենտրոնները արդյոք մատչելի՞ են հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի համար:
Առանձին ուսումնասիրվել են՝

-տեղամասային կենտրոններին հարող տարածքը (կայանատեղին, կանգառները),
-տեղամասային կենտրոնների շենքը և մուտքը,
-քվեարկության սենյակը,
-սանհանգույցը:

Որքանո՞վ է տեղամասային կենտրոնների մատչելիությունը ֆորմալ, այսինքն՝ ձեռք է բերվել ենթակառուցվածքային, նախագծային կամ ճարտարագիտական լուծումներով:
Ինչպիսի՞ կազմակերպչական միջոցառումներ են անհրաժեշտ, որ նշված շինությունները մատչելի դառնան հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար տարածքի որակը գնահատվում է մի քանի չափորոշիչի միաժամանակ առկայության պարագայում՝

-մատչելիություն,
-անվտանգություն,
-ծառայության կամ գործառույթի ապահովում,
-հարմարավետություն:

Տեղամասային կենտրոնների՝ որպես ճարտարապետական կառույցների մատչելիություն ասելով հասկանում են հետևյալը.

Մատչելիության չափանիշներ	ՏԿ մատչելիության չափանիշներ
Անարգել տեղաշարժ տարածության մեջ	• կայանելու հնարավորություն մեքենայից կամ այլ փոխադրամիջոցից օգտվելու դեպքում • հետիոտնային անցումից օգտվելու անարգել հնարավորություն • անարգել մուտքի հնարավորություն • հարմարեցված աստիճաններ և թեքահարթակների առկայություն
Նպատակակետին անարգել հասնելու և ծառայությունից օգտվելու հնարավորություն	• ուղղորդող միջոցներ • անարգել ճանապարհ դեպի տեղամասային կենտրոն • անհրաժեշտության դեպքում անարգել մուտք դեպի այլընտրանքային սրահ, որը կարող է ծառայել որպես քվեարկության սենյակ • անարգել տեղաշարժ քվեարկության սենյակում • բավարար լուսավորություն
Ուղեկցվող այլ ծառայություններից օգտվելու հնարավորություն	• սանհանգույցից անարգել և ինքնուրույն օգտվելու հնարավորություն

Մատչելի տեղամասային կենտրոնը պետք է նաև բավարարի տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման պահանջը: Դա նշանակում է իրազեկման հատուկ նշանների, ուղղորդող հարմարանքների, տեղեկատվական ցուցանակների, նյութերի առկայությունը տարածքի այն վայրերում, որոնք հնարավորություն կտան, որ հաշմանդամություն ունեցող անձինք անհրաժեշտ տեղեկատվությունը և ուղղորդումը ժամանակին ստանան, ընկալեն ու համապատասխանաբար արձագանքեն:

Տեղեկատվության և իրազեկման գործառույթ իրականացնում է նաև մշտադիտարկման ստուգաթերթը: Գնահատման յուրաքանչյուր բաժին կամ ենթաբաժին ամփոփված է ուսումնասիրության առարկա հանդիսացող մատչելիության չափանիշների սահմանմամբ:

Մշտադիտարկման ստուգաթերթի հարցերը ձևակերպված են համաշխարհային պրակտիկայում ընդունված նորմատիվային պահանջներով: Արդյունքում մշտադիտարկման խմբերը ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ տարածքների, շենք/շինությունների մատչելիությունը ըստ չափորոշիչների ճշգրիտ գնահատելու համար: Այս հանգամանքը ծրագրի կարևոր ձեռքբերումներից մեկն է, քանի որ ՀՀ յուրաքանչյուր մարզում և Երևանում ձևավորված են մշտադիտարկման ներառական խմբեր, որոնք ըստ էության լուրջ ներուժ են հասարակության լայն շրջանակներում ներառականության արժեքները ներկայացնելու, սկզբունքներն ամրապնդելու, հաշմանդամություն ունեցող անձանց շահերը պաշտպանելու առումով:

Գնահատման սկզբնական փուլն իրականացվել է 2020 թվականի առաջին եռամսյակում: Համավարակի իրավիճակում, անվտանգության նկատառումներից ելնելով, արտակարգ դրության հայտարարմամբ դադարեցվել են մշտադիտարկման գործընթացները: Մշտադիտարկման աշխատանքները վերսկսվել են հունիս-հուլիս ամիսներին:
Տեղամասային կենտրոնների մատչելիության գնահատումն իրականացվել է Երևանում և ՀՀ 10 մարզերում:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Աղյուսակ 2. Տեղամասային կենտրոնների հիմնական կառուցվածքային-գործառական գոտիները և շենք/շինությունների տարրերը, որոնք ենթակա են հարմարեցման

	Շենք/շինությունների հիմնական կառուցվածքային-գործառական գոտիներ	Գործառական պլանավորման տարրեր
1	Տեղամասային կենտրոնին հարող տարածքը (կայանատեղ)	1.1 Կայանատեղի և կանգառ 1.2 Հետիոտային գոտի 1.3 Մայթ/ մայթեզր 1.4 Մայթի թեքահարթակ
2	Տեղամասային կենտրոնի շենք	2.1 Դեպի մուտքը տանող ճանապարհ 2.2 Շենքի մուտքը 2.3 Աստիճաններ (արտաքին) 2.4 Աստիճանների թեքահարթակ (արտաքին) 2.5 Այլընտրանքային մուտք (արտաքին) 2.6 Դուռ (մուտքի) 2.7 Քվեարկության սենյակ տանող ճանապարհ (միջանցք)
3	Քվեարկության սենյակ	3.1 Վերելակ 3.2 Քվեարկության սենյակի մուտք 3.3 Լուսավորություն 3.4 Այլընտրանքային տարածք, որ կարող է օգտագործվել որպես քվեարկության սենյակ
4	Սանհանգույց	4.1 Գործող սանհանգույց/ զուգարան

Նշենք, որ ամբողջ գնահատման գործընթացը լուսանկարահանվել և մասամբ տեսանկարահանվել է մշտադիտարկման խմբերի կողմից:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

COVID-19 համավարակ

Գնահատման իրականացման ընթացքում COVID-19 համավարակի տարածման պատճառով ու պետության կողմից սահմանափակումների արդյունքում ստիպված ենք եղել դադարեցնել գործընթացը մինչև իրավիճակի բարելավումը:

ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հաշմանդամություն ունեցող անձանց համար անարգել և առանց խոչընդոտների միջավայրի ձևավորումը Հայաստանում հրատապ լուծում պահանջող խնդիրներից մեկն է: Մեր երկրում այդ խնդրին հատուկ ուշադրություն են դարձրել հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի վավերացումից հետո: Հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքացիական, սոցիալական, տնտեսական, կրթական և մշակութային ենթակառուցվածքների մատչելիության մշտադիտարկման տարբեր նախաձեռնությունները հնարավորություն են տալիս ոչ միայն գնահատելու իրավիճակը, այլև բարելավման և օպտիմալ լուծումների օրակարգ հաստատելու մեր երկրում՝ միաժամանակ ապահովելով հավասար հնարավորություններ և իրավունքների իրականացում բոլոր մարդկանց համար:

- Մատչելի ֆիզիկական միջավայրի ապահովումից կշահեն ոչ միայն հաշմանդամություն ունեցող մարդիկ, այլև տարեցները, մանկասայլակով ծնողները, հեծանվորդները և այլք:

- Սույն ուսումնասիրության ամփոփ արդյունքները հետևյալն են.

- ՀՀ տեղամասային կենտրոնները մեծ մասամբ մատչելի չեն հաշմանդամություն ունեցող, հատկապես ֆիզիկական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար:

- Ուսումնասիրված տեղամասային կենտրոններից ոչ մեկը չի համապատասխանում մատչելիության բոլոր պահանջներին միաժամանակ:

- Տեղամասային կենտրոններին հարող տարածքները (կամ կայանատեղին) մեծ մասամբ հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

- Տեղամասային կենտրոնների շենք/շինությունները մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

- Տեղամասային կենտրոններում քվեարկության սենյակները համարվում են մասամբ մատչելի գործառական գոտի հաշմանդամություն ունեցող անձանց համար:

- Տեղամասային կենտրոնների սանհանգույցներն ընդհանրապես մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

- Տեղամասային կենտրոնների մատչելիության խնդիրը հիմնականում կրում է ֆորմալ բնույթ, ինչը նշանակում է, որ խնդրի լուծումը ենթակառուցվածքային, նախագծային կամ ճարտարագիտական մոտեցման կարիք ունի:

Տեղամասային կենտրոնները հատկացնելիս կազմակերպչական միջոցառումների իրականացման հարցում անհրաժեշտ է աջակցություն, որը հնարավորություն կտա առկա ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման այլընտրանքային լուծումներ գտնելու կամ առաջարկելու տեղամասային կենտրոնի շենք/շինության տեղափոխություն այլ տարածք:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տեղամասային կենտրոնների հարակից տարածքը՝ որպես ճարտարապետական կառուցվածք, գնահատվել է հետևյալ գործառական տարրերի մատչելիության տեսանկյունից՝

-կայանատեղի և կանգառ,

-հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության միջազգային խորհրդանիշով-գծանշումների և ցուցանակի առկայություն,

-ճանապարհ դեպի տեղամասային կենտրոն,

-մայթեզր և թեքահարթակ:

Կայանատեղի և կանգառ

Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամություն ունեցող անձի ենթադրյալ տեղաշարժի տեսանկյունից դեպի տեղամասային կենտրոններ տանող ճանապարհը, կանգառների, հետիոտնային անցումների առկայությունը: ՏԿ-ներին հարող տարածքը համարվում է տվյալ շենք/ շինությանը պատկանող, եթե առկա են դեպի տարածք մուտքը սահմանափակող հատուկ ենթակառուցվածքներ՝ ցանկապատ, դարպաս, ցանց, այլ կամ հատուկ սահմանափակող նշաններ: Ստուգաթերթում հստակ նշված են մատչելի կայանատեղիի նորմատիվային նվազագույն չափսերը՝ առանձնացված տարածք՝ առնվազն 2.4մ լայնությամբ փոքր մարդատար մեքենաների և 3.4մ լայնությամբ փոքր միկրոավտոբուսների կայանելու համար: Ըստ ներկայացված տեղեկատվության՝ 1987 տեղամասային կենտրոններից միայն 15,8%-ն ունի կայանատեղի, որը կարող է օգտագործվել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից կամ նրանց ծառայություններ մատուցելու համար *(Գծապատկեր 3)*:



Մասնավոր դեպքերում ավտոմեքենաների համար հատուկ հատկացված կայանատեղին բացակայում է, սակայն առկա են բակային մերձակա տարածքներ, որոնք կարող են հարմարեցվել և ընտրությունների օրերին ծառայել որպես մեքենաների կայանատեղի:

Ըստ մարզերի՝ Երևանի տեղամասային կենտրոններից յուրաքանչյուր 4-րդը (25.8%) ունի հարմարեցված կայանատեղի: Իսկ Սյունիքի մարզում ՏԿ-ների գրեթե ½-ի (43.7%) տարածքում մշտադիտարկման խմբերի կողմից գրանցվել է կայանատեղիի առկայություն: Ի տարբերություն Տավուշի և Վայոց Ձորի՝ մարզերում մշտադիտարկված որևէ ՏԿ-ում ներկայացված մատչելիության նորմերին համապատասխան որևէ կայանատեղի չի գրանցվել *(Գծապատկեր 4)*:



Կայանատեղիների 7%-ի չափսերը չեն համապատասխանում սահմանված չափորոշիչներին, քանի որ փոքր են 2.4մ-ից: Իսկ 10.6%-ը մատչելի են մասնակիորեն, քանի որ այնտեղ կարող են կայանել միայն փոքր մարդատար մեքենաներ *(Գծապատկեր 5)*:



Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ցուցիչ է նաև կայանատեղի կամ կանգառի հեռավորությունը տեղամասային կենտրոնից: Ընդհանուր կայանատեղիում հաշմանդամություն ունեցող անձանց համար կայանատեղի առանձնացնելիս պետք է ընտրել այն տարածքը, որ կապահովի ամենակարճ, անվտանգ և մատչելի երթուղի դեպի շենք/ շինության մուտք:



Ուսումնասիրված կայանատեղի ունեցող տեղամասերի 1/3-ի դեպքում (33.5%-ը) դեպի տեղամասային կենտրոն տանող ճանապարհի հեռավորությունը չի գերազանցում 5մ-ը: Ընդ որում, 16.6%-ում այդ ճանապարհն ավելի կարճ է՝ մինչև 3մ: Ուսումնասիրությունից երևում է, որ 21.9%-ի դեպքում ՏԿ-ների մուտքի և կայանատեղի հեռավորությունը կազմում է 10մ, և համարվում է մատչելի տեղաշարժման դժվարություններ ունեցող

անձի համար *(Գծապատկեր 6)*: Սակայն քիչ չեն նաև այն տեղամասային կենտրոնները, որոնց հեռավորությունը կայանատեղիից գերազանցում է 50 մ-ը: Օրինակ, թիվ 13/33 տեղամասի հեռավորությունը կայանատեղիից մոտ 800 մ է, իսկ թիվ 13/34-ում և 13/43-ում՝ մոտ 500 մ: Ոչ բոլոր տեղամասային կենտրոններն են տեղակայված անմիջականորեն փողոցի հատվածում, ինչը թույլ կտա փոխադրամիջոցների օգնությամբ հասնել տեղամասային կենտրոն: Հատկապես Երևանում և քաղաքային բնակավայրերում կան կենտրոններ, որոնք գտնվում են շենքերի միջև՝ նրբանցքներում, և հաշմանդամություն ունեցող անձանց համար այնտեղ հասնելը դժվարություն է ներկայացնում:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության միջազգային խորհրդանիշի առկայություն

Հաշմանդամություն ունեցող անձանց համար կայանատեղին պետք է գծանշված լինի միջազգային խորհրդանիշով և ունենա ցուցանակ: Ընդունելի է այն տեղադրել, եթե առկա է հաշմանդամություն ունեցող անձանց համար նույնիսկ մեկ մեքենայի կայանատեղի: Ուսումնասիրված 1987 տեղամասային կենտրոններից միայն երեքում կայանատեղին գծանշված է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության միջազգային խորհրդանիշով, և առկա է ցուցանակը: Խոսքը Երևանում գտնվող երկու տեղամասային կենտրոնների (թիվ 2/54 և 2/55) և Գյումրիում (Շիրակի մարզում) տեղակայված թիվ 32/29 տեղամասային կենտրոնի մասին է: Երեք կենտրոններն էլ տեղակայված են դպրոցներում: Կան նաև ՏԿ-ներ, որոնք բարեկարգ են, մատչելի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար, սակայն բացակայում են միջազգային խորհրդանիշով ցուցանակը և գծանշումը:

Ճանապարհ դեպի տեղամասային կենտրոն

Հաշմանդամություն ունեցող անձանց ենթադրյալ տեղաշարժի տեսանկյունից կարևոր է գնահատել ոչ միայն կայանատեղիի առկայությունը և կիրառելիության հնարավորությունը, այլև դեպի տեղամասային կենտրոն տանող ճանապարհի անվտանգ ու մատչելի լինելը: Ուսումնասիրված տեղամասային կենտրոնների 17.8%-ում կան վերգետնյա հետիոտնային անցումներ *(Գծապատկեր 7)*:

Գծապատկեր 7.
Վերգետնյա հետիոտնային անցում



Տեղամասային կենտրոններին հարող տարածքի մատչելիության կարևոր ցուցիչներից է կանգառից կամ կայանատեղից մինչև շինություն տանող ճանապարհի անարգել լինելը: Ուսումնասիրված տեղամասային կենտրոններից գրեթե կեսի (48.6%)՝ դեպի կենտրոն



տանող ճանապարհը հարթ է *(Գծապատկեր 8)*: Մշտադիտարկման խմբերի կողմից 1987 ՏԿ-ներից 1004-ում (50.5%) դեպի շինություն տանող ճանապարհին գրանցվել է տարբեր խոչընդոտների առկայություն: Մասնավորապես, թվով 979 տեղամասային կենտրոններում ճանապարհին առկա էին փոսեր, 206-ում մինչև շենք տանող ճանապարհին՝ աստիճաններ, 196-ում՝ դարպասի շեմքեր, 132-ում՝ աղբամաններ:

Գյուղական բնակավայրերում արձանագրվել են հողային, դաշտամիջյան ճանապարհների, ինչպես նաև առուների, խողովակի և այլ խոչընդոտների առկայություն:

Մշտադիտարկման խմբերն աշխատել են տեղամասային կենտրոններում գարնանը և ամռանը, սակայն տեղամասային կենտրոն տանող ճանապարհին առկա է նաև սեզոնայնության խնդիր: Հատկապես, հյուսիսային մարզերի գյուղական բնակավայրերում տեղումների ժամանակ գրունտային ճանապարհները դառնում են անանցանելի հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Մայթեզր և թեքահարթակ

Ուսումնասիրված տեղամասերից դեպի տեղամասային կենտրոններ տանող ճանապարհին մեծ մասամբ (75.8%) մայթեզրեր չկան: Մայթեր ունեն թվով 1987 տեղամասային կենտրոններից միայն 463-ին հարակից տարածքները (23.3%) *(Գծապատկեր 9)*:





Որպես մատչելիության միջազգային կանոն՝ ընդունված է մայթեզրի նվազագույն լայնությունը՝ 1.8 մ, հավասարակշիռ համարելով հանդիպակաց սայլակով մեկ այլ՝ հաշմանդամություն ունեցող անձի տեղաշարժը: Թույլատրելի է նաև 1.5մ մայթի լայնությունը: 1.2մ լայնությամբ մայթեզրը կարող է համարվել մասնակի մատչելի՝ ենթադրելով, որ որոշակի հատվածներում տարբեր խոչընդոտների (աղբամաններ, ծառեր և այլն) պատճառով

այն կարող է նվազել մինչև 0.9մ: Եթե մայթի լայնությունը 1.8մ է և ավելին (առանց նեղացումների), դա համարվում է լիարժեք մատչելիության ցուցիչ: Տեղամասային կենտրոնների գերակշռող մեծամասնության մայթեզրի լայնությունն առնվազն 120սմ է: Մնացած տեղամասային կենտրոններում (7.1%) այն ավելի նեղ է *(Գծապատկեր 10)*:



Մայթեզրի բարձրությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար համարվում է լիարժեք մատչելի, եթե այն չի գերազանցում 2սմ-ը, տվյալ դեպքում ուսումնասիրված և ճանապարհին մայթ ունեցող տեղամասային կենտրոններից միայն 3%-ն են բավարարում այդ պահանջը՝ թվով 13 տեղամասային կենտրոններ *(Գծապատկեր 11)*:

Ուսումնասիրված տեղամասերից 30-ում (6.5%) մայթեզրի բարձրության չափումները փաստում են, որ տեղամասային կենտրոնների 21%-ում մայթի բարձրությունը 5.1-ից 10սմ է, իսկ 42.8%-ում՝ 10.1-ից 15սմ: Մնացած 26.8% տեղամասային կենտրոններում մայթի բարձրությունը բարձր է 15սմ-ից: Ստուգաթերթերում կան մինչև 30սմ բարձրությամբ մայթեզրի վերաբերյալ նշումներ:

Այն տեղամասային կենտրոններից 254-ում (54,8%), որոնց դեպի մուտք տանող ճանապարհին կա մայթեզր, առկա է փողոցին համահարթեցված թեքահարթակ, որը լիովին մատչելի է:

Օրինակ, թիվ 27/25 (Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, թիվ 6 հիմնական դպրոց) ՏԿ-ի մուտքին առկա են 3 թեքահարթակներ: Մայթեզրի ցածրացված հատվածը (թեքահարթակը) մատչելի է անվասայլակով կամ քայլակով տեղաշարժվող անձի համար, այսինքն՝ այն համահարթեցված է փողոցին, ունի զրոյական ելուստ և 90սմ լայնություն *(Գծապատկեր 12)*:



Հաշմանդամություն ունեցող անձանց տեղամասային կենտրոններ անարգել մուտքի հնարավորությունը գնահատելու համար կարևոր է պարզել մայթերի թեքահարթակների թեքությունն ու լայնությունը: Ուսումնասիրած 32 թեքահարթակից միայն 15-ն ունի մատչելի թեքություն, 12-ը մասնակի մատչելի է, իսկ մնացած 5-ի թեքությունն անմատչելի է: Ըստ մատչելիության չափորոշիչների՝ լայնության թույլատրելի նվազագույն սահմանն է 0.9մ

(90սմ), ինչը սայլակով տեղաշարժվող անձին հնարավորություն կտա անարգել անցնելու: Գնահատման արդյունքները վկայում են, որ ՏԿ-ների 59.5%-ում մայթի թեքահարթակի լայնությունը բավարար է հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի համար: Կենտրոնների 14%-ում մայթի լայնությունը փոքր է անհրաժեշտ նվազագույն սահմանից: Տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար կարևոր են ուղղորդող նշանների առկայությունը: Թվով 1987 տեղամասային կենտրոններից միայն 7-ում է նշվել մայթի թեքահարթակին տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար ուղղորդող դեղին, գոգավոր տակտիլ սալիկների առկայությունը: Ընդ որում, նշված 7 տեղամասերից 4-ը գտնվում է Գյումրիում, 2-ը՝ Երևանում, և 1-ը՝ Վանաձորում:



Այսպիսով, ամփոփելով տեղամասային կենտրոններին հարող տարածքի, մասնավորապես, կայանատեղիի ու կանգառի գնահատումը հաշմանդամություն ունեցող անձանց հավանական մատչելի տեղաշարժի տեսանկյունից, կարելի է եզրակացնել, որ տեղամասային կենտրոնների գերակշռող մեծամասնությունը չունի հարմարեցված և մատչելի կայանատեղի կամ կանգառ: Ուսումնասիրված կենտրոններին հարող տարածքների միայն 1.61%-ն է մասամբ մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար, քանի որ նրանցից ոչ մեկը չի համապատասխանում ստուգաթերթում նշված մատչելիության չափանիշներին միաժամանակ: Ընդ որում, Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի և Վայոց Ձորի մարզերում մշտադիտարկման խմբերի ուսումնասիրության արդյունքում չի բացահայտվել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի հարող տարածք որևէ տեղամասային կենտրոնում *(Գծապատկեր 13)*:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղամասային կենտրոնների հարակից տարածքներում հայտնաբերված արգելքների և թերությունների մեծ մասը կարող է վերացվել կարճ ժամանակահատվածում, քանի որ դա չի պահանջում զգալի ֆինանսական, մարդկային ու ժամանակային ռեսուրսներ:

Մասնավորապես առաջարկվում է՝

- Տեղամասային կենտրոնների մոտ առկա կայանատեղում կամ բակային տարածքում առանձնացնել հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային միջոցների կայանման մատչելի վայր, նշագրել այն և տեղադրել մատչելիության միջազգային

խորհրդանիշով ցուցանակ:

- Տեղամասային կենտրոն տանող ճանապարհի բարձր մայթերի կամ աստիճանների մոտ կառուցել թեքահարթակ:

- Վերանորոգել մայթեզրերին առկա թեքահարթակները՝ դարձնելով դրանք հարթ ու մատչելի:

- Հարթեցնել ճանապարհին առկա փոսերը և վերացնել անհարթությունները:

- Հարթ մակերեսով փակել տեղամասային կենտրոնի դիմաց առկա ջրային բաց խողովակների և անձրևաջրերի համար նախատեսված առուների որոշակի մասը, այնպես որ անվասայլակով, հենակով կամ օժանդակ այլ սարք օգտագործող անձը կարողանա անարգել, անվտանգ և ինքնուրույն տեղաշարժվել:

- Տարածքում առկա անշարժ դարպասների կամ երկաթյա ցանկապատերի բարձր շեմքերը ապամոնտաժել կամ կառուցել փոքր թեքահարթակ:

- Տեղամասային կենտրոն տանող ճանապարհից տեղափոխել աղբամանները, պատվանդանները, քարերը և շարժական այլ փոքր իրերը:

- Բոլոր շինարարական կամ վերանորոգման աշխատանքները իրականացնելիս առաջնորդվել և պահպանել Քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից 2018 թվականին հաստատված «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման հավաքածուի» չափանիշները[4]:

[4] http://www.mud.am/lows/files/305259015_11.Hraman.pdf

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԾԱՌԱՅՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ (ՇԵՆՔ/ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տեղամասային կենտրոնի՝ որպես շինության, մատչելիության գնահատման համար ուսումնասիրվել են հետևյալ գործառական-նախագծային տարրերը.

- տեղամասային կենտրոն ծառայող շենք/շինություններ,
- հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության միջազգային խորհրդանիշի և ուղղորդող նշանների առկայություն,
- տեղամասային կենտրոնի մուտքի աստիճաններ,
- տեղամասային կենտրոնի մուտքի թեքահարթակ,
- այլընտրանքային ճանապարհ դեպի քվեարկության սենյակ,
- տեղամասային կենտրոնի մուտքի դուռ,
- քվեարկության սենյակ տանող ճանապարհ:

Տեղամասային կենտրոն ծառայող շենք/շինություններ

Տեղամասային կենտրոններ ծառայող շենք/շինությունների 44,1%-ը կառուցվել կամ վերակառուցվել/ վերանորոգվել են մինչև 1988 թ.-ը, 11%-ը՝ 1989-2000 թթ. ընթացքում, 19,6%-ը՝ 2000-ականների առաջին տասնամյակում, իսկ 11%-ը՝ վերջին 10 տարիների ընթացքում *(Գծապատկեր 14)*: Յուրաքանչյուր հինգ տեղամասից գրեթե մեկը պլանավորված է վերանորոգել՝ համաձայն արդեն հաստատված որոշման:



Ուսումնասիրված տեղամասային կենտրոնների գերակշռող մեծամասնությունը՝ 74%-ը, տեղակայված է կրթական (դպրոցներ, նախակրթարաններ, ՄԿՈՒ-ներ, բուհեր), 19%-ը՝ մշակութային հաստատություններում: Որպես տեղամասային կենտրոններ՝ ծառայում են նաև համայնքային վարչական կենտրոնները՝ գյուղապետարան, քաղաքապետարան, մարզական հաստատություններ, պետական ու մասնավոր տարբեր կառույցներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության միջազգային խորհրդանիշի և ուղղորդող նշանների առկայություն

Գնահատված 1987 տեղամասային կենտրոններից միայն 11-ի (0.6%) մուտքի մոտ է առկա մատչելիության միջազգային խորհրդանիշը: Ընդ որում, այդ տեղամասերից 4-ը գտնվում են Երևանում, 2-ական՝ Կոտայքի, Լոռու և Շիրակի մարզերում, իսկ 1-ը՝ Փոքր Վեդիում: Հաշմանդամության միջազգային խորհրդանիշ ունեցող ընտրական տեղամասային

կենտրոններից 4-ը տեղակայված են գյուղական բնակավայրերում: Երեք տեղամասերում նաև նշել են, որ շենքի վրա առկա չէ հաշմանդամության միջազգային խորհրդանիշը, սակայն ընտրությունների օրերին այն ժամանակավորապես փակցվում է շենքի մուտքին: Ուսումնասիրված 1987 ՏԿ-ներից միայն 11-ում (0.6%) դեպի մուտք տանող ճանապարհին առկա են տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար հատուկ հարմարեցումներ՝ դեղին գծանշումներ և տակտիլ սալիկներ: Հատկանշական է, որ նշված 11 տեղամասային կենտրոնները գտնվում են 9 շենք/շինություններում, քանի որ երկու շինության մեջ տեղակայվում են երկուական տեղամասային կենտրոններ՝ թիվ 2/34 և 2/35 (Երևանի թիվ 197 դպրոց, հասցե՝ Վիլնյուս 59/5) և թիվ 7/2 ու 7/3 տեղամասային կենտրոնները (Երևանի թիվ 78 մանկապարտեզ, հասցե՝ Բաբաջանյան 139): Բացի Երևանում գտնվող ՏԿ-ներից, տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար կան հատուկ ուղղորդող նշաններ նաև Գյումրիում գտնվող 2 ՏԿ-ում, մեկական՝ Վայոց Ձորում, Լոռիում և Արագածոտնում:

Տեղամասային կենտրոնի մուտքի աստիճաններ

Տեղամասային կենտրոնների գերակշռող մեծամասնություն (87.7%-ը) մուտք գործելու համար հաշմանդամություն ունեցող անձը ստիպված է անցնել (բարձրանալ կամ իջնել) աստիճաններով: Եթե աստիճանների կողքին չկա թեքահարթակ, ապա անվասայլակով տեղաշարժվող ընտրողը չի կարող ինքնուրույն մուտք գործել տեղամասային կենտրոն: Այս առումով 1-3 աստիճանների առկայությունը հնարավոր է դարձնում հեշտությամբ այն հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձի կարիքներին՝ աստիճանների կողքին կառուցելով անշարժ թեքահարթակ կամ տեղադրելով շարժականը: Ուսումնասիրված թվով 505 տեղամասային կենտրոնների մուտքին գտնվող աստիճանները բավարարում են վերոնշյալ պահանջները: Դա կազմում է աստիճաններով մուտք ունեցող կենտրոնների շուրջ 1/3-ը՝ 29%-ը: Տեղամասային կենտրոնների 28%-ում աստիճանների քանակը չի գերազանցում 5-ը:

Հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար, բացառությամբ անվասայլակով, քայլակով, երկկողմանի հենակով տեղաշարժվողների, նաև շատ կարևոր է աստիճանների վրա բռնածողերի առկայությունը: Տեղամասային կենտրոններից 187-ում մուտքի աստիճաններն ունեն բռնածող: Դա կազմում է աստիճան ունեցող ՏԿ-ների միայն 11%-ը: Աստիճանների 2,5մ-ից ավելի լայնության դեպքում նրա երկու կողմերում պարտադիր են բռնածողեր: Սակայն միայն 78 ՏԿ-ների աստիճաններն ունեն երկկողմանի բռնածող, որից միայն 36-ն է տեղակայված 2.5մ-ից ավելի լայնությամբ աստիճանների կողքին: Ի դեպ, կան թվով 965 տեղամասեր, որոնց մուտքի աստիճանների լայնությունը 2.5մ է և

Գծապատկեր 15.
Բազրիքի առկայությունը ՏԿ-ի մուտքի աստիճաններին



ավելի, այսինքն՝ միայն 3%-ն է համապատասխանում մատչելիության տվյալ ցուցիչին *(Գծապատկեր 15)*:

Աստիճանների կողքին առկա բռնածողի բարձրությունը նույնպես պետք է համապատասխանի մատչելիության նորմերին, մասնավորապես, պետք է լինի 90սմ: Այս նորմատիվը պայմանականորեն ընտրված է որպես միջին հասակ ունեցող անձի համար առավել հարմարավետ բարձրություն: Նշված չափորոշիչին են համապատասխանում միայն 87 տեղամասային կենտրոն:
Քանի որ աստիճանը համարվում է վտանգավոր խոչընդոտ հատկապես տեսողական խնդիր(ներ) ունեցող անձանց համար, ապա կարևոր են դեպի աստիճաններ ուղղորդող նշանների առկայությունը: Մշտադիտարկված ՏԿ-ներից միայն 14-ի մուտքի աստիճաններն ունեն տակտիլ եզրանշումներ. դրանք հիմնականում գծանշումներն են (11 տեղամասային կենտրոններում) և տակտիլ սալիկները (4 տեղամասային կենտրոններում): Աստիճանների մատչելիության բոլոր չափորոշիչները միաժամանակ ունեցող ՏԿ-ը մեկն է, որն ունի վերոնշյալ բոլոր պայմանները. այն 30/6 տեղամասային կենտրոնն է, որը գտնվում է Մեծ Սեպասարի (Շիրակի մարզ) միջնակարգ դպրոցում:

Տեղամասային կենտրոնի մուտքի թեքահարթակ

Մուտքին աստիճան ունեցող տեղամասային կենտրոններից միայն 32.4%-ն ունեն թեքահարթակներ (*Գծապատկեր 16*): Մնացած 67.6%-ում թեքահարթակները բացակայում են, հետևաբար անմատչելի են աջակցող սարքեր (անվասայլակ, քայլակ, հենակ, ձեռնափայտ) օգտագործող անձանց համար:



Թեքահարթակների գերակշռող մեծամասնությունն անշարժ է՝ 92.8%-ը: Թվով 38 ընտրատեղամասերում առկա են շարժական թեքահարթակներ: Սովորաբար շարժական թեքահարթակները տեղադրվում են ընտրությունների օրը: Տեղամասային կենտրոնների 19%-ը, մուտքին թեքահարթակներ չունենալով, կարևորում են խնդիրը և առաջիկայում պլանավորում են բացը լրացնել:

Շենքի մուտքին թեքահարթակի առկայությունը չի երաշխավորում հաշմանդամություն ունեցող անձի անարգել տեղաշարժը: Ըստ էության խնդիր է թեքահարթակի համապատասխանությունը մատչելիության չափանիշներին: Մշտադիտարկված տեղամասային կենտրոններից մի քանիսում մուտքին թեքահարթակն առկա է, սակայն առանց չափումների էլ ակնհայտ է, որ դրանք մատչելի չեն, քանի որ անհարթ են կամ կիսաքանդված:

Համաձայն մատչելիության չափանիշների՝ մինչև 20սմ բարձրությամբ խոչընդոտի դեպքում թեքահարթակը պետք է լինի 1:10 թեքությամբ, իսկ 20 սմ-ից ավելի բարձրությամբ խոչընդոտի դեպքում՝ 1:12 թեքությամբ: Գնահատման ընթացքում կատարվել են ՏԿ-ների մուտքի թեքահարթակների հիմքի երկարության և բարձրության չափումներ: *Գծապատկեր 17*-ում ներկայացված է թեքահարթակի հիմքի բարձրության և երկարության հարաբերության արդյունքում շենքի մուտքին առկա թեքահարթակների թեքության մատչելիությունը: Ինչպես երևում է գծապատկերից, լիարժեք մատչելի







թեքություն ունեն թեքահարթակների միայն 10%-ը, 47%-ը կարող են համարվել մատչելի, քանի որ ուղեկցողի օգնության դեպքում հաշմանդամություն ունեցող անձն այն կարող է հաղթահարել: Իսկ մնացած 43%-ն ընդհանրապես անմատչելի են, ուստի կարիք ունեն վերակառուցման:

Թեքահարթակի մատչելիության առաջնային ցուցիչներից է նաև թեքահարթակի լայնությունը: 90սմ-ը համարվում է թեքահարթակի թույլատրելի լայնության նվազագույն սահմանը: Այդ ցուցանիշին համապատասխանում են թեքահարթակների 72.5%-ը: Այսպիսով, թվով 1987 ՏԿ-ներից միայն 97-ում կան մատչելիության նորմերին համապատասխանող թեքահարթակներ:

Եթե թեքահարթակի հորիզոնական երկարությունը գերազանցում է 180սմ-ը, կամ թեքությունը ավելին է 1:12-ից, ապա պետք է կառուցել կրկնակի բռնաձող՝ 70սմ և 90սմ բարձրությամբ: Ինչպես երևում է՝ *Գծապատկեր 19*-ում բռնաձողեր ունեն ՏԿ-ների մուտքի թեքահարթակների միայն 23%-ը, մյուս թեքահարթակների կողքին դրանք բացակայում են: Միայն 31 տեղամասային կենտրոնում են առկա թեքահարթակներ, որոնք ունեն կրկնակի բռնաձող, և որոնց բարձրությունը համապատասխանում է մատչելիության չափորոշիչին:

Այլընտրանքային ճանապարհ դեպի քվեարկության սենյակ

Ըստ մատչելիության նորմատիվների, եթե դեպի միևնույն ծառայությունների մատուցման գոտի կա առնվազն մեկ մատչելի ճանապարհ, ապա դա բավարար է հաշմանդամություն ունեցող անձանց անարգել մուտքն ապահովելու համար: Այդ նպատակով մշտադիտարկման խմբերի կողմից նաև ուսումնասիրվել է այլընտրանքային մուտքը դեպի տեղամասային կենտրոն: Այսպես, այն տեղամասային կենտրոններում, որոնց մուտքն ունի այնպիսի խոչընդոտ, ինչպիսին աստիճաններն են, ուսումնասիրվել են այլընտրանքային մուտքի առկայությունը մատչելիության տեսանկյունից: Պարզվում է, որ ՏԿ-ից միայն 20%-ն ունեն հավելյալ մուտք:

Գծապատկեր 20.
Այլընտրանքային մուտքի առկայությունը



Այլընտրանքային մուտքի դռներն ընտրությունների ժամանակ հիմնականում փակ են լինում: Արդյոք այլընտրանքային մուտքն անարգե՞լ է հաշմանդամություն ունեցող անձի համար: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ այլընտրանքային ճանապարհների հինգից միայն մեկն է (21%) անարգել *(Գծապատկեր 20)*:

Տվյալ տեղամասերից 81%-ում մոնիթորինգային խումբը գրանցել է լրացուցիչ աստիճանների առկայություն, 11%-ում հաշմանդամություն ունեցող անձի համար ճանապարհը 90 սմ-ից ավելի նեղ է: Որպես խնդիր՝ գրանցվել են նաև հատակի անհարթությունը, բարձր շեմքը և այլն *(Գծապատկեր 21)*:

Գծապատկեր 21.
Այլընտրանքային մուտքի խոչընդոտների առկայությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար



Տեղամասային կենտրոնի մուտքի դուռ

Տեղամասային կենտրոնի դռան լայնությունը ևս մեկ կարևոր առարկա է ուսումնասիրության համար: Մշտադիտարկված կենտրոններից 21.3%-ի մուտքի դուռը միափեղկ է, մնացածը՝ երկփեղկ: Գործող օբյեկտների համար որպես մատչելիության չափորոշիչ հաստատված է դռների ոչ պակաս, քան 90սմ լայնությունը: Այդ լայնությունը բավարար է անվասայլակով անձի մուտքի համար, քանի որ ստանդարտ անվասայլակի լայնությունը 70սմ է: Լրացուցիչ տարածությունն անհրաժեշտ է ձեռքերով անիվները շարժելու համար:

Գծապատկեր 22.
Միափեղկ դռան փեղկի լայնությունը սմ-ով



Երկակի հենակ օգտագործող անձի համար ևս անհրաժեշտ է լրացուցիչ տարածություն: Ուստի լիարժեք մատչելիության ապահովման համար միափեղկ դռան լայնությունը գերադասելի է, որ գերազանցի 90 սմ-ը: Միափեղկ դուռ ունեցող տեղամասային կենտրոնի մեծ մասի՝ 67.8%-ի դռնատեղի լայնությունը փոքր է 90սմ-ից *(Գծապատկեր 22)*:
Մշտադիտարկողների չափումները վկայում են, որ առավել հաճախ գրանցվում է դռան մինչև 58սմ լայնություն, ինչը միանշանակ չի կարող մատչելի համարվել հաշմանդամություն ունեցող անձի համար: Մնացած ՏԿ-ների դեպքում միափեղկ դռան լայնությունը համապատասխանում է պահանջվող նորմերին:

Ինչ վերաբերում է երկփեղկ դռներին, ապա այս պարագայում մշտադիտարկման խմբերը չափել են մեկ փեղկի լայնությունը և գրանցել են, թե արդյոք բացվում են դռների երկու փեղկերը: Երկփեղկ դռների մեկ փեղկի մասնակի մատչելիության չափորոշիչը կարող է լինել 60-ից 90 սմ լայնությունը: Ավելի մեծ լայնությամբ մուտքի դռները համարվում են լիարժեք մատչելի: Լայնության տեսանկյունից ՏԿ-ների գերակշռող մեծամասնության՝ 94.7%-ում մեկ փեղկի լայնությունը բավարարում է մատչելիության չափորոշիչները, իսկ 13.9%-ի դեպքում այն կարելի է համարել լիարժեք *(Գծապատկեր 23)*: Մատչելիության պահանջներին համապատասխանող լայնությամբ երկփեղկ դռների 90%-ի երկու փեղկերը բացվում են: Սակայն մեկնաբանություններից պարզ է, որ որոշ դեպքերում դռան երկու փեղկերը կարող են բացվել, սակայն մեջտեղում առկա անշարժ ձողը հաշմանդամություն ունեցող անձի համար մուտքը դարձնում է անմատչելի: Խնդիր է նաև տարբեր ՏԿ-ներում նշված կրկնակի դռների առկայությունը, որոնց դռնատեղին բավականին նեղ է, իսկ շեմքը՝ բարձր:

Գծապատկեր 23.
Երկփեղկ դռան լայնությունը



Որպես մատչելիության կանոն՝ դռնատեղերը չպետք է ունենան շեմք կամ բարձրության տատանում: Եթե դուռն ունի շեմք, ապա այն պետք է լինի հարթ, իսկ բարձրությունը չպետք է գերազանցի 2.5սմ-ը: Հետազոտված ՏԿ-ներից 32.2%-ում դռան շեմքը համահարթեցված է: Մնացած 67.6% կենտրոններն ունեն որոշակի բարձրությամբ շեմք: Այդ տեղամասային կենտրոններից միայն 9%-ի շեմքի բարձրությունը համապատասխանում է լիարժեք մատչելիության չափորոշիչներին:
Եվս 24.5%-ի շեմքի բարձրությունը չի գերազանցում 4.5 սմ-ը, որը տվյալ դեպքում կարող է գնահատվել որպես մասամբ մատչելի: Ի դեպ, մշտադիտարկման խմբերի կողմից կան նշումներ՝ մինչև 35 սմ-ը ընդունել որպես շեմքի բարձրություն, ինչը որևէ շինարարական չափորոշիչի չի կարող համապատասխանել:
Այն հարցին, թե մուտքի դռանը կամ արդյոք բրայլյան համակարգով նշումներ, որևէ ՏԿ-ում նման փաստ չի արձանագրվել:

Քվեարկության սենյակ տանող ճանապարհ

Մշտադիտարկման խմբերի կողմից ուսում-նասիրվել է քվեարկության սենյակ տանող ճանապարհը՝ արդյոք այն անարգել է, թե խոչընդոտներ կան: Ինչպես երևում է *Գծապատկեր 24*-ից, հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղամասային կենտրոններում քվեարկության սենյակ տանող ճանապարհը մեծ մասամբ (57.7%) անարգել չէ: Խոչընդոտների 56.4%-ի վերացման համար անհրաժեշտ են շինարարական վերանորոգման աշխատանքներ: Խոսքը գնում է ոչ թե կապիտալ փոփոխությունների, այլ քանդված հատակի վերանորոգման, շեմքի համահարթեցման, աստիճանների կողքին թեքահարթակ կառուցելու, փոսերը հարթեցնելու, խողովակները փակելու և նման տեսակի մեծ ռեսուրսներ կամ ջանքեր չպահանջող աշխատանքների մասին: 41.2% դեպքերում խոչընդոտների վերացման համար անհրաժեշտ են կազմակերպչական գործողություններ՝ գորգերից հատակն ազատելը, ծաղկամանները, գույքը տեղաշարժելը, ինչը, ըստ էության, չի պահանջում մեծ ջանքեր կամ լրացուցիչ ծախսեր:



Ամփոփելով տեղամասային կենտրոններ հանդիսացող շենք/շինությունների մատչելիության հիմնախնդրի ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է փաստել, որ միայն թվով 49 (2.5%) տեղամասային կենտրոններ ծառայող ճարտարապետական կառույցներն են համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության չափանիշներին: Ինչպես երևում է *Գծապատկեր 25*-ից, տեղամասային կենտրոնների մատչելի շենք/շինությունները բացակայում են, օրինակ, Տավուշի մարզում, իսկ Արագածոտնում, Արմավիրում և Վայոց Ձորում նման տեղամասային կենտրոնները եզակի են:



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղամասային կենտրոններ հանդիսացող շենք/շինությունների որոշ խոչընդոտներ կարելի է վերացնել, քանի որ դրանք զգալի ջանքեր, ֆինանսական ծախսեր և մարդկային ռեսուրսներ չեն պահանջում: Սակայն շենքերում որոշակի արգելքներ վերացնելու համար

անհրաժեշտ է որոնել տեխնիկական լուծումներ, ֆինանսական ռեսուրսներ, որոնք երբեմն նշանակալի են, ուստի պետք է դիտարկել այս գործընթացը երկարաժամկետ հեռանկարում՝ ըստ ժամանակացույցի.

- վերանորոգել շենքի մուտքի աստիճանները, տեղադրել բռնաձողեր և տակտիլ սալիկներ,
- կառուցել թեքահարթակներ մուտքի մոտ 1-5 աստիճաններ ունեցող տեղամասային կենտրոններում,
- վերանորոգել և ձևափոխել մատչելիության չափանիշներին չհամապատասխանող թեքահարթակները,
- շինության մատչելի լինելու դեպքում տեղադրել մատչելիության միջազգային խորհրդանիշ,
- վերացնել կամ հնարավորինս իջեցնել/նվազեցնել դռան շեմքերը,
- կատարել շինարարական փոփոխություններ՝ մեծացնելով դռան լայնությունը,
- մուտքի մոտ վերացնել խոչընդոտները (ոտքերը սրբելու խոզանակ, գորգ և այլն),
- այլընտրանքային մատչելի մուտքի առկայության դեպքում գլխավոր մուտքի մոտ տեղադրել տեղեկատվական և ուղղորդող ցուցանակ,
- վերացնել դեպի քվեարկության սենյակ տանող ճանապարհի արգելքները՝ աղբաման, ծաղկաման, գորգ և այլն:
- Եթե տեղամասային կենտրոնների շենքերն անմատչելի են և ֆինանսական մեծ միջոցներ են պահանջում բարեփոխելու համար, նպատակահարմար է ընտրել այլընտրանքային տարածք համայնքում:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տեղամասային կենտրոններում քվեարկության սենյակի մատչելիության գնահատման համար ուսումնասիրվել են մի քանի գործառական-նախագծային տարրեր.

- մուտք դեպի քվեարկության սենյակ,
- քվեարկության սենյակի դուռը,
- տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար քվեարկության սենյակի մատչելիությունը,
- հարկից հարկ տեղափոխվելու հարմարանքներ,
- այլընտրանքային սրահի առկայություն:

Մուտք դեպի քվեարկության սենյակ

Մշտադիտարկված ընտրատեղամասերում մեծ մասամբ (89.4%) քվեարկության սենյակը գտնվում է առաջին հարկում:

Գծապատկեր 26.
Քվեարկության սենյակն առաջին հարկում է



Գծապատկեր 27.
Քվեարկության սենյակի դռան շեմքի համահարթեցված լինելը



Ուսումնասիրված 1987 ՏԿ-ների 57.1%-ում քվեարկության սենյակի մուտքն անարգել է հաշմանդամություն ունեցող անձանց համար, քանի որ սենյակի շեմքը համահարթեցված է: *Գծապատկեր 26, 27:*

Գծապատկեր 28.
Քվեարկության սենյակի դռան շեմքի բարձրությունը



Ինչպես երևում է *Գծապատկեր 28*-ից, ուսումնասիրված տեղամասային կենտրոններից, որոնց քվեարկության սենյակի դուռն ունի շեմք, միայն 13%-ն ունեն մատչելիության չափորոշիչներին համապատասխան 2.5սմ-ը չգերազանցող շեմքի բարձրություն: Տեղամասային կենտրոնների 21.5%-ում շեմի բարձրությունը մասնակիորեն թույլատրելի է հաշմանդամություն ունեցող անձանց անվտանգ

տեղաշարժի համար: Մնացած տեղամասային կենտրոններում շեմի առկայության դեպքում բարձրությունը կարող է խոչընդոտ լինել, և չի երաշխավորվում անարգել մուտքը դեպի քվեարկության սենյակ:
Նշենք, որ 31.2% դեպքերում, մուտք գործելով տեղամասային կենտրոն, ընտրողն անմիջապես հայտնվում է քվեարկության համար նախատեսված սրահում:

Քվեարկության սենյակի դուռը

Ուսումնասիրված կենտրոններից 37.2%-ում քվեարկության սենյակի դուռը միափեղկ է, իսկ 59.7%-ում՝ երկփեղկ: Մուտքի միափեղկ դուռ ունեցող ընտրատեղասերի մեծ մասի՝ 74% դեպքերում դռնատեղի չափսերը չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց համար ընդունված պահանջներին, քանի որ 90սմ-ից նեղ են: Մնացած 24% տեղամասային կենտրոններում մուտքի դռան չափսերը խոչընդոտ չեն հանդիսանում:
Քվեարկության սենյակի երկփեղկ դուռ ունեցող տեղամասային կենտրոնների 5.1%-ում մեկ փեղկի լայնությունը չի համապատասխանում մատչելիության չափանիշներին, քանի որ նեղ է 59սմ-ից: Մնացած դեպքերում, ինչպես երևում է *Գծապատկեր 29*-ից, դռան լայնությունը հաշմանդամություն ունեցող անձանց՝ դեպի քվեարկության սենյակ մուտք գործելու համար խոչընդոտ չի հանդիսանում:





Տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար քվեարկության սենյակի մատչելիությունը

Ուսումնասիրված թվով 1987 ընտրատեղասերից միայն մեկի քվեարկության սենյակի դռանն է առկա բրայլյան համակարգով նշաններ: Խոսքը թիվ 24/39 տեղամասային կենտրոնի մասին է, որը տեղակայված է ք. Ալավերդու մշակույթի տանը (Սանահին-Սարահարթ 2/32ա):
Տեսողական խնդիրներ ունեցող անձանցտեղաշարժի մատչելիության համար կարևոր է քվեարկության սենյակի լուսավորությունը: Թվով 82 ընտրական կենտրոնների քվեարկության սենյակում պատուհանները բացակայում են, ինչը կազմում է ուսումնասիրված

զանգվածի 4.1%-ը: Այդ տեղամասերից 4-ում մշտադիտարկման խմբերը գրանցել են նաև լուսավորության կետերի բացակայություն հենց գնահատման պահին:

Հարկից հարկ տեղափոխվելու հարմարանքներ

Ուսումնասիրված թվով 1987 ընտրատեղամասերից 210-ում (10.6%) քվեարկության սենյակը չի գտնվում առաջին հարկում: Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի մատչելիության համար անհրաժեշտ է վերելակ կամ հարկից հարկ տեղափոխելու հատուկ տեխնիկական միջոց՝ անվասայլակի համար աստիճաններին ամրակներ, թեք ամբարձիկ: Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ 210 ՏԿ-ից ոչ մեկում վերոնշյալ տեխնիկական միջոցներից որևէ մեկը առկա չէ:

Մշտադիտարկման ստուգաթերթում ներառված էր վերելակների մատչելիության գնահատման հարցերի բլոկ, որը նպատակ ուներ դիտարկելու վերելակների կիրառելիության հնարավորությունը հաշմանդամություն ունեցող անձանց կողմից, օրինակ՝ վերելակի չափսերը (ներքին լայնություն, խորություն), բռնաձողի, ձայնային և լուսային ազդանշանների, բրայլյան նշանների առկայությունը: Քանի որ ոչ առաջին հարկում գտնվող ընտրատեղամասերից որևէ մեկում չի եղել վերելակ, ապա տվյալ տեխնիկական միջոցի մատչելիության գնահատումը հնարավոր չի եղել իրականացնել:

Այլընտրանքային սենյակի առկայությունը

Այն դեպքում, երբ քվեարկության սենյակը գտնվում է ոչ առաջին հարկում, հաշմանդամություն ունեցող ընտրողների համար կարող է որպես քվեարկելու վայր օգտագործվել նույն հարկում գտնվող մեկ այլ սրահ: Տեղամասային 210 կենտրոններից, որոնց քվեարկության սենյակը գտնվում է ոչ առաջին հարկում, միայն 53-ն ունեն ընդարձակ սրահներ, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց համար կարող են օգտագործվել որպես քվեարկության այլընտրանքային սենյակ: Տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար սրահների լուսավորությունն ապահովված է պատուհանների ու արհեստական լուսավորության կետերով: Վերոնշյալ 53 ՏԿ-ներից 2-ի այլընտրանքային սրահներում բացակայում են պատուհանները, սակայն բավարար քանակով լուսավորության կետեր կան:

Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ տեղամասային կենտրոնների քվեարկության սենյակները հաշմանդամություն ունեցող անձանց տեսանկյունից կարող են լինել

առավել մատչելի ճարտարապետական գոտի: Այսպիսով, կարելի է փաստել, որ տեղամասային կենտրոնների 27.1%-ում քվեարկության սենյակները մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար *(Գծապատկեր 31)*:



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

210 տեղամասային կենտրոններում քվեարկության սենյակները գտնվում են ոչ առաջին հարկում, սակայն դրանից 53-ն ունեն համապատասխան սենյակ առաջին հարկում, ուստի անհրաժեշտ է այս հարկում գտնվող տարածքներն օգտագործել քվեարկության գործընթացը կազմակերպելիս: Առաջին հարկում համապատասխան տարածքի բացակայության դեպքում միանշանակ պետք է ընտրել այլընտրանքային շինություն համայնքում:

- Կատարել շինարարական վերանորոգում և մեծացնել քվեարկության սենյակի դռան լայնությունը, վերացնել բարձր շեմքերը կամ հնարավորինս իջեցնել դրանք:
- Տեղադրել ուղղորդող նշաններ՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Տեղամասային կենտրոնների սանհանգույցի մատչելիության գնահատումն իրականացվել է հետևյալ գործառական տարրերի ուսումնասիրությամբ՝

- գործող սանհանգույցի առկայություն,
- սանհանգույցի դուռ,
- սանհանգույցի հատակ,
- զուգարանակոնք,
- սանհանգույցի հատակագծային չափսեր:

Գործող սանհանգույցի առկայությունը

Տեղամասային կենտրոններում գործող սանհանգույցների առկայության և մատչելիության խնդիրը շատ կարևոր է, քանի որ հաշմանդամություն ունեցող անձանց պետք է դիտարկել ոչ միայն որպես հավանական ընտրողի, այլև ընտրական հանձնաժողովի անդամի, դիտորդի կամ վստահված անձի: Վերջին երեք գործառույթների իրականացումը ենթադրում է հաշմանդամություն ունեցող անձանց տևական ներկայություն տեղամասային կենտրոններում, հետևաբար՝ սանհանգույցից օգտվելու անհրաժեշտություն:

Սանհանգույցների մատչելիության չափորոշիչները ենթադրում են զուգարանակոնքի մոտ բռնածողի պարտադիր առկայություն, դռան և զուգարանակոնքի որոշակի նվազագույն չափսերի, տարածքի հատակագծային պարտադիր նորմատիվների համապատասխանեցում: Շենք/շինությունների հենց այս ճարտարագիտական գործառական գոտին լրջագույն բարեփոխման կարիք ունի, քանի որ ոչ միայն հաշմանդամություն ունեցող, այլև բոլոր անձանց տեսանկյունից ամենաանտեսված և տարրական կենցաղային, սանիտարահիգիենիկ պահանջները չբավարարող հատվածն է: Խնդիրն ավելի խորն է, քան մատչելիության սահմանված պահանջներին համապատասխանելիությունը: Նախևառաջ գործող սանհանգույցի առկայությունն ինքնին չլուծված խնդիր է, բացի այդ՝ ոչ բոլոր տեղամասային կենտրոններում են առկա գործող սանհանգույցներ: Գյուղական համայնքներում տեղակայված տեղամասային կենտրոնների գերակշռող մեծամասնությունում լուծված չէ սանհանգույցի խնդիրը: Շատ դեպքերում դրանք տեղակայված են բակում և ունեն հորային կառուցվածք:



Պարզվում է, որ գործող սանհանգույց կա տեղամասային կենտրոնների միայն ¾-ում (76.6%)

(Գծապատկեր 32): Դա նշանակում է, որ Հայաստանի յուրաքանչյուր չորս տեղամասային կենտրոններից մեկում (թվով 463 ՏԿ) ընդհանրապես բացակայում է սանհանգույցը: Օրինակ, թիվ 18/55 տեղամասային կենտրոնում, որը գտնվում է Արագածոտնի մարզի Հացաշեն գյուղի մշակույթի տանը, գործող սանհանգույց չկա, հանձնաժողովի անդամները ստիպված օգտվում են հարևանի տան զուգարանից: Մի տեղամասային կենտրոնում էլ պատասխանատուն հրաժարվել է սանհանգույցը ցույց տալուց (թիվ 4/54, որը գտնվում է Երևանում): Այն տեղամասային կենտրոններից 1/3-ում (32.9%), որտեղ գրանցվել է գործող սանհանգույցի առկայություն, ներկառուցված զուգարանակոնք կա (այսպես կոչված, ասիական կամ թուրքական տիպի զուգարան), ինչը խիստ սահմանափակում է հաշմանդամություն ունեցող անձանց օգտվելու հնարավորությունը: Որպես կանոն՝ նման զուգարանակոնքը գտնվում է հատակից որոշակի բարձրության վրա. որոշ դեպքերում նշվում է մոտ 30 սմ բարձրությամբ աստիճան: Այդ սանհանգույցները անմատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այս պարագայում անհրաժեշտ են վերակառուցման աշխատանքներ՝ նոր զուգարանակոնքեր տեղադրելու նպատակով կամ տեղամասերի համար նոր տարածքի ընտրություն:

Թվով 131 տեղամասային կենտրոններում սանհանգույցը և քվեարկության սենյակը գտնվում են տարբեր հարկերում: Բոլոր վերոնշյալ հանգամանքները լուրջ խոչընդոտ են ոչ միայն հաշմանդամություն ունեցող ընտրողի, այլև հանձնաժողովի անդամների և դիտորդական առաքելություն իրականացնող անձանց համար:

Սանհանգույցի դուռ

Մշտադիտարկման ստուգաթերթում նշված են հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի սանհանգույցի չափորոշիչները, մասնավորապես, սանհանգույցի դռան դեպի դուրս բացվելու հանգամանքը: Գործող սանհանգույցների միայն 60%-ն է բավարարում այդ պահանջը, մնացած 40% տեղամասային կենտրոններում խնդիրն առկա է:



Մշտադիտարկված ընտրատեղամասերից միայն 2-ում սանհանգույցի դռան վրա կան բրայլյան համակարգով նշաններ. դրանք թիվ 6/21 (Երևանի թիվ 47 մանկապարտեզ) և



22/17 (Սպիտակի թիվ 5 հիմնական դպրոց) տեղամասային կենտրոններն են:

Անվասայլակ և երկկողմանի հենակներով տեղաշարժվող անձանց սանհանգույցից անարգել օգտվելու համար անհրաժեշտ է 90սմ դռան նվազագույն լայնություն: Չափումների արդյունքում պարզվել է, որ տեղամասերի միայն 10.1%-ն է բավարարում այդ չափանիշը: Մնացած 89.8% դեպքերում սանհանգույցի դուռը նեղ է, ինչը խոչընդոտում է անվասայլակ և հենակներ օգտագործող անձանց անարգել մուտքը *(Գծապատկեր 34)*:

Սանհանգույցի հատակը

Սանհանգույցներում հատակը հարթ է կեսից ավելին ուսումնասիրված տեղամասային կենտրոններում՝ 58.5%-ում: Մնացած դեպքերում հատակը քանդված է, ունի բետոնե ելուստ, աստիճան և այլն *(Գծապատկեր 35)*:



Զուգարանակոնք

Մատչելիության տեսանկյունից կարևոր է 45-50 սմ բարձրությամբ զուգարանակոնքի առկայությունը: Այս ցուցիչին համապատասխանում են տեղամասային կենտրոնների միայն 17%-ը: Զուգարանակոնքի բարձրության խնդիրը նշվում է հիմնականում այն տեղամասերում, որոնք տեղակայված են մանկապարտեզներում ու դպրոցներում: Մշտադիտարկման խմբերի մեկնաբանություններում նշվում է, որ մանկապարտեզներում և հիմնական դպրոցներում մեծ մասամբ տեղադրված են մանկական զուգարանակոնքեր, որոնց բարձրությունը կարող է լինել մոտ 30սմ կամ մի փոքր ավելի բարձր:

Մեծահասակների համար նախատեսված սանհանգույցները քվեարկության օրը հիմնականում փակ են լինում:

Մատչելիության չափորոշիչների համաձայն՝ սանհանգույցում զուգարանակոնքի կողքին պետք է լինի բռնաձող, որն առկա է հետազոտված տեղամասային կենտրոններից միայն թվով 40-ում (դա կազմում է սանհանգույց ունեցող տեղամասերի ընդամենը 3%-ը):

Սանհանգույցի հատակագծային չափսեր

Սանհանգույցի հատակագծային երկարությունից ու լայնությունից է կախված տեղաշարժման դժվարություններ ունեցող անձի օգտվելու հնարավորությունը: Ըստ ընդունված չափանիշների՝ սանհանգույցի հատակագծային նվազագույն լայնությունը պետք է լինի 1.65մ, իսկ երկարությունը՝ 1.8մ: Կա կարծիք, որ այդ նվազագույն չափսերը բավարար են առանց լվացարանի սանհանգույցի համար: Եվ եթե կա լվացարան, ապա սանհանգույցի երկարությունը պետք է լինի 2.2մ-ից ավելին: Մշտադիտարկման խմբերը չափումներ են կատարել ըստ առաջին տարբերակի: Տեղամասային կենտրոններում գործող սանհանգույցների միայն 41%-ն են համապատասխանում հատակագծային չափսերի պահանջներին: Մնացած բոլոր դեպքերում այդ չափսերն ավելի փոքր են:

Գծապատկեր 36.
Մատչելի սանհանգույցներ տեղամասային կենտրոններում՝ ըստ մարզերի



Այսպիսով, ուսումնասիրված թվով 1987 տեղամասային կենտրոններից միայն 2-ի (0.1%) սանհանգույցն է համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության նորմերին *(Գծապատկեր 36)*:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

Հետազոտության կարևոր նպատակներից են ՀՀ-ում տեղամասային կենտրոնների հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի մատչելիության մակարդակի, մատչելի կենտրոնների բացահայտումը, ոչ մատչելի տեղամասերում բարելավման իրականացման նպատակով առաջարկությունների ձևակերպումը և բարեփոխումների գործուն մեխանիզմների ներդրումը:

Սույն ուսումնասիրության հիմքում ընկած են հաշմանդամություն ունեցող, մեծ մասամբ տեղաշարժման դժվարություններ և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար մատչելի և հարմարավետ միջավայր ապահովող կանոններն ու չափանիշները:

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ ըստ ընդունված նորմատիվային պահանջների՝ մշտադիտարկված թվով 1987 տեղամասային կենտրոններից որևէ մեկը չի կարող համարվել ամբողջությամբ մատչելի, քանի որ որևէ ՏԿ չի համապատասխանում չորս հիմնական գործառական գոտիներին ներկայացված մատչելիության պահանջներին:
Տեղամասային կենտրոնները կարող են համարվել մասամբ մատչելի՝ ի նկատի ունենալով մատչելիության չափանիշներին համապատասխանելիությունը՝ որոշակի վերապահումներով:



Գնահատման արդյունքում առանձնացվել են թվով 524 տեղամասային կենտրոն, որոնց մշտադիտարկման համար առանձնացված 4 հիմնական գործառական գոտիներից առնվազն մեկը համապատասխանում է մատչելիության չափանիշներին *(Գծապատկեր 37)*.:

Մարզ	Տոկոս	Քանակ
Երևան	6.6%	131
Արագածոտն	1.6%	32
Արարատ	2.3%	45
Արմավիր	2.4%	48
Գեղարքունիք	1.4%	28
Կոտայք	2.6%	51
Լոռի	2.8%	56
Շիրակ	3.1%	61
Սյունիք	1.9%	37
Տավուշ	1.1%	21
Վայոց Ձոր	0.7%	14
	26.4%	524

Աղյուսակ 3.
Մատչելի գործառական մեկ գոտի ունեցող տեղամասային կենտրոններ

Այդ տեղամասային կենտրոնները կազմում են հետազոտված ՏԿ-ների ընդամենը 26.4%-ը:

Հետազոտության առարկա հանդիսացող գործառական գոտիներից ամենամատչելին քվեարկության սենյակի հատվածն է, ոչ մատչելին՝ սանհանգույցը:

Մշտադիտարկման արդյունքների համաձայն՝ տեղամասային կենտրոններից մեկը (թիվ 33/29,որը գտնվում է Շիրակի մարզի Հայրենյաց գյուղի մշակույթի տանը) կարող է մասնակի մատչելի համարվել հենաշարժողական խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար, քանի որ պայմանները բավարարում են չորս գործառական գոտիներից երեքին, սակայն միևնույն ժամանակ ՏԿ-ում բացակայում է գործող սանհանգույցը:

Թվով 39 տեղամասային կենտրոններ կարող են համարվել մասնակի մատչելի, քանի որ որոշակի վերապահումով համապատասխանում են երկու գործառական գոտիների մատչելիության պահանջներին *(Գծապատկեր 38)*:

Գծապատկեր 38.
Մատչելի գործառական գոտի ունեցող տեղամասային կենտրոններ



Մարզ	Տոկոս	Քանակ
Երևան	0.80%	16
Արագածոտն	0.00%	0
Արարատ	0.10%	1
Արմավիր	0.10%	1
Գեղարքունիք	0.20%	4
Կոտայք	0.1%	1
Լոռի	0.30%	6
Շիրակ	0.20%	3
Սյունիք	0.40%	7
Տավուշ	0.00%	0
Վայոց Ձոր	0.00%	0
		39

Աղյուսակ 4.
Մատչելի գործառական մեկից ավելի գոտի ունեցող տեղամասային կենտրոններ

Այդ տեղամասային կենտրոնները կազմում են հետազոտված ՏԿ-ների ընդամենը 2%-ը:

Հետազոտության արդյունքում բացահայտված պատկերը քաղաքական գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց սահմանափակ մասնակցության վկայություն է: Ուսումնասիրության արդյունքները միաժամանակ համայնքային կարևոր ծառայություններից օգտվելու անհասանելիության ցուցիչ են, քանի որ տեղամասային կենտրոնները մեծ մասամբ տեղակայված են առաջնահերթ նշանակություն ունեցող համայնքային ենթակառուցվածքներում՝ դպրոցներում, կրթական և մշակութային տարբեր հաստատություններում, համայնքի վարչական կենտրոններում և այլն: Հետևաբար, հաշմանդամություն ունեցող ոչ մատչելի տեղամասային կենտրոնի առկայությունը նշանակում է ոչ միայն չիրացված ընտրական իրավունք, քաղաքացիական մասնակցության չիրացված հնարավորություն, այլև անհասանելի կրթություն, մշակութային կյանք և այլն:

Նույնիսկ վերջին տասնամյակում վերանորոգված կամ վերակառուցված շինությունների զգալի մասը չի բավարարում ոչ միայն մատչելիության պահանջները, այլև չի բխում քաղաքացիների հարմարավետության կարիքներից:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ տեղամասային կենտրոնների մատչելիության խնդիրն ունի ինչպես ֆորմալ, այնպես էլ կազմակերպչական բնույթ: Այսինքն՝ բարեփոխումների, պայմանների բարելավման, հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարավետ և մատչելի միջավայր ստեղծելու համար մեծ մասամբ անհրաժեշտ են նախագծային, ճարտարագիտական լուծումներ, միաժամանակ շինարարական աշխատանքների որակի խիստ վերահսկողությամբ: Մասնավորապես, դա վերաբերում է տեղամասային կենտրոնների հարակից տարածքների հարմարեցմանը, դեպի կենտրոն տանող ճանապարհին և շինության մուտքին, սանհանգույցի կառուցմանը կամ վերանորոգմանը:

Ընդունելով ֆորմալ բնույթի անմատչելիության գերակշռող ծավալը՝ չի կարելի նաև թերագնահատել կազմակերպչական բնույթի գործունեության կարևորությունը խնդրի արդյունավետ լուծման առումով: Այլընտրանքային ռեսուրսների՝ մասնավորապես, այլընտրանքային մուտքի, սրահների հարմարեցման և օգտագործման հնարավորությունը տեղամասային կենտրոնների պատասխանատուների կողմից մեծ մասամբ անտեսվում է՝ հիմնախնդրին անտեղյակ լինելու և ներառական սկզբունքներով ձևավորված մշակույթ չունենալու պատճառով:

ՏԿ-ների մատչելիության բարելավումը կարող է իրականացվել տեղական սահմանափակ միջոցներով՝ փոսերի հարթեցմամբ, շարժական թեքահարթակների տեղադրմամբ, տարածքի վերակազմակերպմամբ, պարզ ցուցանակների կամ ուղղորդող նշանների տեղադրմամբ:

Հետազոտությունը բացահայտեց, թե որքան մեծ բաց կա իրազեկման և համայնքի կրթման ոլորտում: Հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ անձանց (ծերեր, երեխաներ, հղի կանայք) համար մատչելիության սահմանված պահանջների վերաբերյալ բացակայում են գիտելիքները և պատկերացումները: Մյուս կողմից՝ հետազոտությունն ակնհայտորեն ներկայացրեց պետական և քաղաքացիական քաղաքականության անհետևողականությունն ու վերահսկողության բացը:

Տեղամասային կենտրոններին հարող տարածքները մեծ մասամբ հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց տարածքում տեղաշարժվելու և մեքենաները կայանելու համար: Խնդիրը բնորոշ է ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերին:

Տեղամասային կենտրոնների շենք/շինությունների մուտքը և ճանապարհը դեպի ծառայությունների մատուցման վայր, տվյալ դեպքում դեպի քվեարկության սենյակ, մեծ մասամբ չեն բավարարում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջները: Այս դեպքում իրավիճակի բարեփոխման համար կարևոր են ոչ միայն շինարարական և ճարտարագիտական լուծումները, այլև կազմակերպչական հետևողական մոտեցումները:

Քվեարկության սենյակը՝ որպես գործառական գոտի, համարվում է համեմատաբար հարմարավետ և մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Բացառություն են կազմում այն տեղամասային կենտրոնները, որոնք, գտնվելով շինության ոչ առաջին, այլ կիսանկուղային, նկուղային, երկրորդ կամ երրորդ հարկերում, չունեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հարկից հարկ տեղափոխելու հատուկ հարմարանքներ: Տեխնիկական լուծումների անհասանելիության կամ անհնարինության դեպքում առավել խելամիտ է այլընտրանքային տարածքի օգտագործումը՝ որպես քվեարկության սենյակի, որ առկա է նշված տեղամասային կենտրոնների մոտ մեկ քառորդում:

Ինչպես վերը նշվել էր, չորս հիմնական գործառական գոտիներից ամենավատթար վիճակում են գտնվում տեղամասային կենտրոնների սանհանգույցները: Դա առավել կարևոր է այն տեսանկյունից, որ տեղակայման վայր են հանդիսանում համայնքի կարևոր կրթական, մշակութային և վարչական ենթակառուցվածքները: Խնդրի լուծման համար անհրաժեշտ են շինարարական, ճարտարագիտական լուծումներ: Հարկ է ուշադրություն դարձնել ասիական կամ, ինչպես ընդունված է անվանել, թուրքական, պարսկական զուգարանակոնքի առկայությանը, ինչը չի կարող մատչելի համարվել հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հետազոտության արդյունքում ստացված վիճակագրությունն ինքնին բնութագրում է խնդրի լրջությունը. 1987 ՏԿ-ներից ընդամենը երկուսն են համապատասխանում մատչելիության առաջնային պահանջներին: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ընտրատեղամասերում սանհանգույցների առկայության, պիտանելիության, սանիտարահիգիենիկ վիճակն ունի խիստ բարելավման կարիք:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Օրենսդրորեն ամրագրել քվեարկության կազմակերպումն ու անցկացումը մատչելի տեղամասային կենտրոններում:

Օրենսդրորեն ամրագրել, որ մինչև քվեարկությանը նախորդող 10-րդ օրը անձը կարող է դիմել (այդ թվում նաև էլեկտրոնային տարբերակով) այլ մատչելի տեղամասերում քվեարկելու համար՝ ըստ գտնվելու վայրի լրացուցիչ ցուցակներում ընդգրկվելու կամ շրջիկ քվեատուփով քվեարկելու:

Շրջիկ քվեատուփերի օգտագործման օրենսդրական կարգավորումն ընդլայնել նաև տնից դուրս գալու հնարավորություն չունեցող անձանց և սոցիալական հաստատություններում գտնվող անձանց համար:

Օրենսդրորեն ամրագրել, որ պետական և հանրային նշանակության կառույցները պետք է ունենան հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության անձնագիր, որտեղ նշված են լինելու կառույցների կենսականորեն կարևոր գործառական-ճարտարագիտական գոտիներից օգտվելու հնարավորությունը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 22-ի N 136-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող ընտրողների ինքնուրույն և գաղտնի ընտրելու իրավունքը:

Նախաձեռնել շինարարական աշխատանքների և ծառայությունների մատուցման ոլորտում մատչելիության և հաշմանդամություն ունեցող անձանց անվտանգության պահանջների ամրագրումը և խստագույն վերահսկողությունը:

ՏԿ ծառայող շենք/շինությունների վերանորոգման որոշում կայացնելիս ներկայացնել հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի մատչելիության, անվտանգության, իրազեկման և հարմարավետության պարտադիր պահանջները և իրականացնել վերահսկողություն:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Կազմել յուրաքանչյուր տեղամասային կենտրոնի մատչելիության անձնագիրը՝ ներկայացված տվյալների բազայի հիման վրա: Մշակել տեղամասային կենտրոնների մատչելիության չափանիշները, այդ թվում՝ ֆիզիկական մատչելիություն, լուսավորություն, ջեռուցում, կահավորում և այլն:

Մշակել տեղամասային կենտրոնի համար կազմակերպչական և տեխնիկական հարմարեցման պլան՝ ըստ ժամանակացույցի, որի արդյունքում կենտրոնները հնարավոր կլինի դարձնել մատչելի և անվտանգ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Համագործակցել ՏԻՄ-երի և տարածքային հանձնաժողովների հետ՝ համայնքում այլընտրանքային մատչելի տարածքների հայտնաբերման և ընտրություններին օգտագործման համար:

ԿԸՀ-ի կայքում, օգտագործելով տեղամասային կենտրոնների հետազոտության տվյալների բազան, տեղադրել տեղամասային կենտրոնների ինտերակտիվ քարտեզ՝ ձայնային հրահանգների առկայությամբ, որը կպարունակի հանգամանալից տեղեկատվություն վերջիններիս տարբեր գործառական գոտիների՝ հարակից տարածքի, շենքի, քվեարկության սենյակի և սանհանգույցի ֆիզիկական մատչելիության վերաբերյալ:

Տեղամասային կենտրոններում ապահովել տեղեկատվության մատչելիությունը և հասանելիությունը հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի ընտրողների համար:

Խթանել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը ԿԸՀ-ի գործունեության ֆորմալ և ոչ ֆորմալ կազմում՝ մատչելիության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և կարիքների բարձրաձայնման նպատակով:

Խելամիտ հարմարեցումների ու մատչելիության համար նախատեսել լրացուցիչ հստակ առանձնացված ֆինանսական միջոցներ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Շարունակաբար աջակցել քաղաքացիական մշտադիտարկման խմբերի կարողությունների հզորացմանը:

Զարգացնել շինարարական աշխատանքներ իրականացնող ընկերությունների կարողությունները համընդհանուր դիզայնի և մատչելիության հաստատված նորմերի վերաբերյալ:

Իրականացնել հանրային վերահսկողություն նոր կառուցվող և վերակառուցվող օբյեկտերի նկատմամբ:

Կազմել մատչելիության քարտեզներ և ուղեցույցներ:

Նախքան ընտրությունները համայնքային մշտադիտարկման խմբերի կողմից կազմակերպել մոնիթորինգային այցելություններ՝ տեխնիկական և կազմակերպչական խնդիրների բացահայտման ու լուծման համար:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

Կազմել յուրաքանչյուր ՏԿ-ի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության, տեղեկատվության, անվտանգության և հարմարավետության ապահովման պլան:

Մեքենաների կայանման համար վայրը նախապես ընտրել և ուղղորդիչ նշաններով փակցնել ընտրացուցակների հրապարակման հետ մեկտեղ:

ՏԿ-ներ ծառայող շինությունների ճարտարապետական այն գոտիներում, որտեղ կան աստիճաններ, անհրաժեշտ է կառուցել կամ տեղադրել թեքահարթակներ: Դա առավել հեշտ է անել այն տեղամասային կենտրոններում, որտեղ աստիճանների քանակը չի գերազանցում 3-5-ը: Խոսքը ինչպես անշարժ, այնպես էլ շարժական թեքահարթակների մասին է:

Կան ՏԿ-ների առանձին ճարտարագիտական գոտիներ, որոնք համապատասխանում են մատչելիության պահանջներին, սակայն հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային խորհրդանիշը բացակայում է: Անհրաժեշտ է այդ գոտիներում տեղադրել նշանը:

Հարկավոր է կանգառներում առնվազն մեկ տեղ հատկացնել հաշմանդամություն ունեցող անձանց համար և տեղադրել խորհրդանիշը:

ԱՄՓՈՓՈՒՄ

«Մատչելիություն և քաղաքական ներառում» ծրագրի շրջանակներում «Ագաթ» ՀԿ-ն ՀՀ ամբողջ տարածքում իրականացրեց տեղամասային կենտրոնների մատչելիության համապարփակ հետազոտություն: Հետազոտության կարևոր նպատակներից էին ՀՀ-ում տեղամասային կենտրոնների հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության մակարդակի, մատչելի կենտրոնների բացահայտումը, ոչ մատչելի տեղամասերում բարելավման իրականացման նպատակով առաջարկությունների ձևակերպումը և բարեփոխումների գործուն մեխանիզմների ներդրումը:

Տեղամասային կենտրոնների հետազոտության ամփոփ զեկույցը, ինչպես նաև մշտադիտարկողների կողմից ստուգաթերթերում մուտքագրված ողջ տեղեկատվական բազան՝ բոլոր տվյալներով, գնահատման արդյունքներով, տեղամասային կենտրոնների աշխարհագրական կոորդինատներով, փոխանցվելու է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Որպես հավելված՝ ԿԸՀ-ին կտրամադրվի նաև մասամբ մատչելի տեղամասային կենտրոնների ցանկը: Նշված կենտրոնները կարելի է քիչ ֆինանսական ռեսուրսներով հեշտությամբ մատչելի դարձնել:

Հավելվածում նաև ներառված են՝

- մշտադիտարկված 1987 տեղամասային կենտրոններից մեկ կամ մեկից ավելի մատչելի գործառական գոտի ունեցող թվով 524 տեղամասային կենտրոնները,

- այն տեղամասային կենտրոնների ցանկը, որոնց քվեարկության սենյակը չի գտնվում առաջին հարկում, սակայն առաջին հարկում կա այլ հարմար տարածք, որը կարելի է օգտագործել որպես քվեարկության սենյակ,

- այն տեղամասային կենտրոնների ցանկը, որոնց քվեարկության սենյակը չի գտնվում առաջին հարկում, և այս հարկում չկա քվեարկություն կազմակերպելու այլ հարմար տարածք, ուստի հնարավորության դեպքում պետք է տեղամասային կենտրոնում կառուցել վերելակ կամ տեղադրել հարկից հարկ տեղափոխող տեխնիկական այլ միջոց, ի վերջո՝ քվեարկությունը տեղափոխել համայնքում գտնվող այլընտրանքային ուրիշ շինություն,

- տեղամասային կենտրոնի մուտքի մոտ 1-3 աստիճան ունեցող տեղամասային կենտրոնների ցանկ. նշված կենտրոններում հնարավոր է քիչ ծախսերով թեքահարթակ կառուցել,

- տեղամասային կենտրոնի մուտքի մոտ 10-ից ավելի աստիճան ունեցող տեղամասային կենտրոնների ցանկ. ավելի նպատակահարմար է այս կենտրոնները տեղափոխել այլ շենք/ շինություն,

- մուտքի մոտ դռան 5սմ-ից ավելի բարձրությամբ շեմք ունեցող տեղամասային կենտրոնների ցանկ,

- մուտքի մոտ անմատչելի և առանց բռնածողի թեքահարթակ ունեցող տեսամասային կենտրոնների ցանկ. հիշյալ կենտրոնները պետք է վերակառուցել ըստ մատչելիության նորմատիվների,

- մատչելի այլընտրանքային մուտք ունեցող տեղամասային կենտրոններ:

Հետազոտության արդյունքները լուրջ ներդրում կհանդիսանան Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական և քաղաքացիական մասնակցության, դրա խթանմանն ուղղված առաջարկությունների մշակման համար: Այս զեկույցում արտացոլված արդյունքները կծառայեն որպես օգտակար ռեսուրս ոչ միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար՝ նպաստելու հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացմանը, այլև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների և տարածքային մարմինների քաղաքաշինության պատասխանատու կառույցների համար՝ նպաստելու կրթության համընդհանուր ներառականությանը և, առհասարակ, Հայաստանում մարդու իրավունքների ու ներառականության սկզբունքների կայացմանը:

2021